

ՅՈՎՍԷՓՈՍԻ ՀԻՆ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԸ

(The Sourual of Theological Studies. (Յուլիս) 1908 (Vol. IX. № 36).

1787 թուին Կ. Պօլսում տպագրուեցաւ մի հայ գիրք 496 էջից, որի վերնագիրն էր. —

«Գիրք Պատմութեանց Յովսեփոսի Երրայեցւոց . . . յազազս Պատերազմի Հրէից ընդ Հռովմայեցիս և աւերման Երուսաղէմի: Թարգմանեալ ի Լատինացւոց բարբառոյ ի Հայոց լեզու, ի ձեռն ուրումն Իլովացւոյ Ստեփանոսի [ա. ի. լէմբրդցի], Բանին Ատուծոյ սպասաւորիս:

Ապա հետեւում է մի այլ վերնագիր-էջ, ուր Ստեփանոսը նկարագրում է իբրև «երջանկակրօն միաբան... Սուրբ գահի... գերիմաստ վարդապետ ... քաջամուտ և հարազատ թարգմանիչ, ի թուականութեանն մերում ՌՃԹ» (=1660):

Այդ հատուածին հետեւում է.

«Իսկ նարդինիս տպագրութեամբ ի լոյս ածեցեալ ի ստոյգ ձեռագրէ նոյնոյ Թարգմանչին ի Լուսակառոյց Աթոռս Սուրբ Էջմիածին, վեհափառ հրամանաւ Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց, ի յեթմներորդում ամի հայրապետութեան նորին»:

«Եւ ի Պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ, տեառն Յովակիմայ և տեառն Զաքարիայ Աստուածիմաստ Վարդապետաց և Արհի եպիսկոպոսաց»:

«Ի տպարանի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ.

«Ի թուոյ Փրկչին, 1787. և ի մերում թուականիս, ՌՄԼԶ»:

Այս Ստեփանոսը ծնուած էր Լեհաստան, բայց կրկին գաղթած Հայաստան և իւր երկերից շատերը գեռ ևս զարդարում են Էջմիածնի հայրապետական գրատան զարակները, նորանք պարունակում են մի մեծահատոր

Հայ-Լատին բառգիրք, Արիստոտելի բնազանցութեանց
 թարգմանութիւնը՝ ընդօրինակած շատ ու շատ անգամ,
 թարգմանութիւն Դիոնիսիոս Արիստոտելացու*, թարգմա-
 նութիւն Հարանց վարքի, որ կոչուում է «Հայելի կենաց»**),
 Պոսէլի «Liber Causarum». —

Յովսէփոսի մեր ձեռքն ունեցած հատարի վերջում
 կան բազմաթիւ յիշատակարաններ, Դոցանից առաջինը
 մի յիշատակարան է կցած Ստեփանոսի թարգմանու-
 թեան նոյն իսկ իւր սեփական ձեռքով գրուած օրինա-
 կին իւր իշխանազուն բարեկամի՝ Երնջակի Ապրակունեաց
 Ս. Յովհ. Մկրտիչ վանքի վերանորոգող Յոհան Կարճա-
 ւանցու ձեռքով: Այդ Յոհանը պատմում է, որ յաճախ
 լսած լինելով Յովսէփոսի մասին, համոզում է Ստեփա-
 նոսին թարգմանել նորա երկը և ինքը, իբրև բարեկա-
 մական մի յիշատակ, պահում է իւր մօտ թարգմանչի
 ինքնագիր օրինակը †:

Մի երկրորդ յիշատակարանի մէջ գրքի հրատարա-
 կողը յայտնում է, որ Յոհանի յիշատակած Յովսէփոսի
 նախնագոյն թարգմանութիւնը անյետացել է Լէնկ-թէմուրի
 արշաւանքի ժամանակ և ոչ մի տեղ գտնել չէր կարելի:
 Ուստի և, Ստեփանոսը, կրկին թարգմանեց այդ Փիլի-
 պոս կաթուղիկոսի օրով. «Եւ մինչ սկսաք — շարունա-

*) ... Աերջինս Ը. դարում ապրող Ստեփանոս Սիւնեցու
 հնագոյն թարգմանութեան մի այլ, նորից աչքէ-անցրած գործ է:

Ծան. հեղ.

**) Թարգմանած լեհերէնից:

Ծան. հեղ.

†) ... «Յոհան ... եղբայր ըստ մարմնոյ տեսուն Եսա-
 յեայ շինողի սուրբ Կարապետի վանիցն ապրակունեաց ... դա-
 ւառաւ ի Մեղրոյ և գեղջաւ Կարճաւանցի, լսէի միշտ ի գիրս
 ամենայն պատմազրուութեանց հայոց յաղագս Յովսէփոսի և տե-
 սանէի լիկայութիւնսն առ ի նմանէ և ցանկայի ... և ոչ երբէք
 տեսանէի ... վասն այսորիկ ... միշտ թախանձէի ... զեղբայրն
 մեր զտէր Ստեփանոս վարդապետն Լեհացի առ ի թարգմա-
 նել: Որոյ խոնարհեալ յաղաչանս մեր սիրով թարգմանեաց ...
 և զսա որ իւրով ձեռամբ է գրեալ, առեալ վասն իմ պահեցի,
 զի եղիցի սա յիշատակ ... նորին»:

Ծան. քարգ.

կուժ է յիշատակարանը, — տպել զգիրքս, թէպէտ և եկին ի ձեռս մեր օրինակք գրեցեալք այլ գրչաց, ոմանք ստոյգ և ոմանք սխալք, այլ մեք զայնս հեղինակի գրքոյս համեմատեցաք (sic) և զտպեալս որ կայ ի միջի, ի հեղինակէն առաք. այս է ի ձեռագրէն, զոր նոյն ինքն իւր վացի տէր Ստեփանոս վարդապետն իւր ձեռամբն էր գրեալ. որ և նոյնն եգեալ կայր ի գրատանն սրբոյ Աթոռոյս էջմիածնի . . . Մինաս արքեպիսկոպոսն, որ հարազատօրէն ընթերցեալ զհեղինակն գրքոյս, զխառն տեղիս գրուածոցն պարզեաց և ի յերկարութիւնս տանցն, զիւրաքանչիւր բանս գլխագրով տնտեաց . . . Մի այլ տեղ հրատարակողը գրուժ է. «էր սա (Յովսէփոս) թարգմանեալ ի վաղնջուց ժամանակաց ի նախնի վարդապետացն մերոյ ի մեր լեզու և ի գիր, վասն օգտութեան ինչ իրաց և վասն լրութեան աստուածային գրոց՝ զոր կանուխն ասացաք* . որպէս գրէ գրասէր վարդապետն մեր Յօհան Կորճաւանցի յիւրումն յիշատակարանի. և որպէս տեսանեմք մեք զօմանս բանս սորա ի վկայութիւն առեալ ի նախնի վարդապետաց մերոց սրբոց, զոր օրինակ ի սրբոյն Գրիգորէ Տաթևացւոյն (1340—1411) և այլոց, Իսկ ի լինիլ խստագոյն տառապանաց աշխարհիս Հայոց ի Լանկթամուրայ աշխարհաւերէ և այլոց հինից** , սպառեալ է և այս գիրք ընդ այլ շահաւէտ և օգտակար գրեանց մերոց. որ և ոչ ուրեք երբէք գտանի»:

Հայ մատենագրութեամբ զբաղուողներն ամենքն ևս ենթադրել են, որ այս յիշատակարաններն արժանի են ամենայն վստահութեան և թէ Յովսէփոսի նախնագոյն թարգմանութիւնը յիրաւի անհետացած էր և որ 1787 թ. հրատարակած բնագիրը պարզապէս թէ. դարու մի թարգմանութիւն է. Ռուփինոսի լատիներէնից՝ Սակայն

*) Ինագիրը, «զոր կանուխ ասացաք» և ոչ «ստացաք», որ թարգմանուած է սխալմամբ «and we posed it» լիտանակ «and we said it precedently»:
Ծնր. քրզմ.

**) Յայլոց հինից» — ley the other extortions» և ոչ and with auctients»:
Ծան. քարգ.

մի քանի տարի առաջ, առիթ ունեցայ համեմատել այդ Յոյն բնագրի հետ, մասնաւորապէս էսսէնների նկատմամբ և այնպէս յանկարծակիի եկայ լեզուի դասական ոճի և յատկութեան կողմից, որ այդ մասին բարեկարգ մի՞ հ. Պարոնեանին դիմեցի, խնդրելով Յովսէփոսից հատածներ և կոչումներ որ ունէր Հայ նախնի հեղինակների մէջ, համեմատելու տպագրուած բնագրի հետ, որը և ընձեռնեցի նորան, քանի որ հ. Պարոնեանը երբէք աեսած չէր։ Իւր մահից քիչ առաջ գրեց ինձ, որ կոչումներ կան Մովսէս Խորենացու մէջ, բայց որ յատկապէս մատնացոյց չէր անում՝ թէ որ մասերում, Հետեւելով այդ ցուցմունքին, գտայ բազմաթիւ հատածներ, ուր այդ վիպասանը, որը գրեց, ինչպէս ոմանք ապացուցանում են 700 թուականների շուրջը, իսկ ես՝ ենթադրում եմ 500-ից առաջ, — ամբողջ ասուածքներ է հիւսում՝ այս թարգմանութիւնից իւր բնագրի մէջ։ Ապացոյց՝ երկու օրինակ բաւական կը լինի։

Մով. Խոր. Գ. Բ. զլ. ԺԹ. Յովս. Պատ. Պատ. գլ. Ա.
2 § 3. հետ.

Իբրև ետես հիւրկանու հրէից... եթէ զգօրս հոռմայեցուց փախստական արարեալ, զոմանս ի ծով, զոմանս ի քաղաքս, խաղաղութեամբ ընդ երկիրն անցանէր Բարզափրան... առաքէ յերուսաղէմ հանդերձ հեծելազօրու, իբր թէ ի պահանա խաղաղութեան, բայց ի գաղտնիս օգնել անսիգոնեայ... Էս տակառապետիս դառով խրատ տուեալ հիւրկանու, զի առ Բարզափ-

Ընդ հիւրկանու և Փասայելոսի կռուին... զամենեսեան ի փախուստ գարձոյց զոմանս ի քաղաքս զոմանս ի տաճարն և զայլս ի ձորն վերջին փակեաց։ Յայնժամ Անտիգոնոս խնդրեաց զպակարոս իբր ի պահանա խաղաղութեան... զպարթևն հանդերձ Եձ. հեծելով ի քաղաքն հիւրկանութեան ընկալաւ. որ եկեալ էր իբր թէ համողել զնոսա ի խաղաղութիւն, բայց իսկապէս

րան երթիցէ վասն ^{աւերա-}
^{ծոյ աշխարհին . . .}

... առ Բարզափրան ի ծո-
վեզրն ի գիւղն որ կոչի Էֆ-
սիպոն:

Եւ Բարզափրան խորա-
մանկութեամբ պատուէր ըզ-
նոսա. եւ ինքն յանկարծա-
կի գնացեալ անսի մնացե-
լոց զօրացն հրամայն սայր
ի բուն առնուլ զնոսա . .

Եւ Բարզափրանայ հրա-
ման տուեալ սակառապե-
սին հայոց յերուսաղէմ ըզ-
Հերովդէս որսալ. իսկ սա-
կառապետն ելեալ արսափ
քան զպարիսպն զՀերովդէս
պարտի. զոր չառեալ յանձն
Հերովդի, այլ ոչ կալ ի քա-
ղաքին երկուցեալ ի պա-
տառմանէ անտիգոնեանցն.
ի գիւղերի ի ծածուկ ընսա-
նեօքն հանդերձ առ եղոմա-
յեցիս փախչէր:

օգնել անսիգոնեայ: Ապա
Փասայելոսի դառով խրատ
ես, զի առ Բարզափրան
հրեշտակութեամբ երթիցէ
վասն խաղաղութեան . . .

... և նոքա գնացեալ ի տեղի
ինչ ծովեզրեայ, որ կոչի
Էֆսիպոն զդաւն իմացան:

... Եւ Բարզափրան խո-
րամանկութեամբ հրաժա-
րէր . . . Եւ ինքն յանկարծա-
կի գնաց անսի առ Պա-
կարոս, մնացելոց զօրացն
հրաման տուեալ ի բուն
առնուլ զՓասայելոս և ըզ-
Հիւրկանոս . . .

... Ապա սակառապետն
հրաման տուեալ զՀորովդէս
որսալ, ջանայր պարտի զնա,
զի ելանիցէ արսափ քան
զպարիսպն . . . ոչ էառ յան-
ձրն արսափ ելանել . . . Հե-
րովդէս ի գիւղերի հանդերձ
ընսանեօք և բարեկամօք իւ-
րովք յերկիրն եղովմայեց-
ւոց անգիտելով թշնամեացն
փախստեայ գնաց:

Աւելացնում եմ թի այլ աւելի կարճ օրինակ, այլ
քաղմաթիւ ուշագրաւ օրինակներից.

Մով. Խոր. Գ. Բ. ԳԼ. ԻԵ. Յովս. Գիրք Ա. ԳԼ. 21 §11.
(425).

Որովք լցեալ զհրապարա-
կըս անտիգրացւոց քան վը-
սաւանաւ երկայնութեամբ
Ոչ ապաքէն ասորաց Ան-
սիոք քաղաքին զանանց և
զանկախ հրապարակն արդ-

յասակեաց կնասայ յասա-
կոփ. զի ուխտաւորք յատա-
կացն դիւրագոյն կարգես-
ցեն առ ոչ ինչ վնաս ու-
նել քաղաքին: Բայց...

մալիր քնան վստահաւ եր-
կայնութեամբ յասակեաց
սպիտակ կնասայ յասակոփ.
և փողոցիւք զարդարեաց առ
ի վանել զուղիս անձրեաց,
զի մի ինչ վնաս առնիցեն
քաղաքին. բայց...

Մովսէսի այսպէս անուանուած Հայոց պատմու-
թիւնը մի վիպասանութիւն է հիւսուած ի միասին ամեն
տեսակի հեղինակների քաղուածներէց, որոնք 500 թուա-
կաններին ապրող բիւզանդական կրթութիւն ստացած մի
Հայի համար դիւրամատչելի էին իւր սեփական կամ Յոյն
լեզուով: Ասորական, Պարթևական և Վիրական աղբիւրների
իւրաքանչիւր քաջագործութիւն կարող էր հայերի յաւակ-
նութեան նիւթ լինել: Այդ գլուխների մէջ, որոնցից ես
քաղում եմ վերն առաջ բերած Յովսէփոսի կտորները,
նա Պարթևներին դարձնում է պատուական հայեր: Պարզ
է, որ նա (Խորենացին) ձեռքի տակ ունէր «Հրէից
Պատմութեան» թարգմանութիւնը, համարեա յար և նման
1787 թ. հրատարակած օրինակի հետ: Նոյն իսկ եթէ
նա գրուած լինի այնչափ ուշ, ինչպէս 700 թուականների
մօտերը, ապա Յովսէփոսի թարգմանութիւնը պէտք է
առ նուազն հազար տարի հնագոյն լինէր, քան այն որ
տալիս է Ստեփանոս Լեհացին 1660-ին:

Դառնանք այժմ մի հնագոյն հայ աղբիւրի, որ բո-
վանդակում է ընդարձակ քաղուածներ Յովսէփոսից: Դա՛
Եւսեբիոսի Պատմութեան նախնագոյն հայ թարգմանու-
թիւնն է, կատարուած Մեսրոպի ձեռքով, 450-ից առաջ,
որի թուական որ ընդունել են Ուսուցչապ. Մերքս. Դ^r
Նէսալ. Պ^r Նօրման Մակ լին, Դ^r Ե. Պրէօշըն (Prof Merx,
Dr. Nestle, Mr Norman Mclean, Dr E. Preuschen) և ու-
րիշները: Այդ քաղուածները մենք յար և նման ենք գըտ-
նում 1660 թ. տպագրուած բնագրի համապատասխան
կտորներին. սակայն չչտապենք եզրակացութեան յանգե-

լու, որչափ և բնական լինէր ննթադրել, թէ Եւսեբիոսի թարգմանիչը այդ կտորների բնագիրն առել է Յովսէփոսի արդէն դոյութիւն ունեցող մի թարգմանութիւնից: Մեզ համար փոխառութեան հարցն այլ կերպ է դրոււմ և այդ քաղուածներն առնուած են հայ Եւսեբիոսից, Սորանից հետևում է, որ այդ երկու հեղինակներից, — Եւսեբիոս ու Յովսէփոս, — վերջինը պէտք է և աւելի ուշ թարգմանուած լինի հայերէն, և որ նորա թարգմանիչը, արդէն ծանօթ լինելով հայ Եւսեբիոսի հետ, նեղութիւն կրելուց խուսափոււմ է, երբ հասնում է այդ հատածներին, պարզապէս արտագրելով դորա Եւսեբիոսից: Մի պարզ օրինակ բաւական կլինի: Այստեղ նախ տալիս եմ Ռուփինոսի թարգմանութիւնը. ապա Դ. Նէսայլի հարադատ թարգմանութիւնը՝ հին Ասորերէնից, և ապա վերջապէս զուգարիծ էջերով հայ տպագրած բնագրի թարգմանութիւնը և Յունարէնը.

Bel. Iud. V. 10 § 2.

Distioribus quidem luanere etiam sicut profugere, par causa erat pereundi: nam quassi transfugere voluisset, propter patrimonium quisque occidebatur. Cum fame autem crescebat desperatio seditiosorum, et in dies singulos utrumque malum amplius accendebatur. Et palam quidem nulla erant frumenta, irrupentes autem scrutabantur domos. Et siquidem iuvenissent aliquid, los qui negaverant verberabant; si vero nihil iuvenissent, quasisi diligentius celavissent, tormentis itidem afficiebant. Habendi autem argumento erant corpora miserorum, cum ea quae solidis viribus starent, abundare putarentur, tabidi autem transfigebantur: nec rationis esse videbatur, statim fame moriturus occidere.

Die Kirchengeschichte des Eusebius aus dem Syrischen übersetzt von Elerhard Nestle (Leipzig, 1901). ԳՐԹ. III ԳԼ. 6.—Iosephus *De Bello Iud.* v 10 § 2.

Denjenigen, welchen ein Besitz war, war zu bleiben oder umzukommen gleich für sie. Unter dem Vorwand

nämlich, den sie einem (A, gegen einen) andichteten, als ob er an die Römer ausliefern wollte, kam er um wegen seines Besitztums. Und mit dem Hunger wurde auch die Frechheit der Aufwiegler stark, und jeden Tag entflamnten sich diese zwei Uebel. Weizen aber wurde offen auch an keinem Orte mehr gelhen. Sie spaangen nämlich und traten ein und durchsuchten die Häuser. Und wenn sie etwas fanden bei einigen und leugnend, schulgen sie sie; und wenn sie nichts fanden, so folterten sie sie als Leute, die aus Not verborgen hätten. Des Beweis aber (A nämlich), ob einem etwas war oder nicht, war das Aussehen der Leiber der Kranken. Und diejenigen von ihnen, deren Leiber feststanden, galten als solche, deren Nahrung reichlich sei; Zu töten aber diejenigen, die vor ihrem Hunger nahe waren zu sterben, das war ohne Gedanke.

1787 ζωγ ζρωωρη.

βρηβ ρωωρηρβ ρωω υρηρηρ

(Niese).

Quicumque habebant possessiones, manere atque perdere par erat illis, nam per praetextum quem concinnabant in accusationem quam intabant hominibus, quasi ad Romanos manum uelit dare, perdebatur ille propter possessiones eorum. Ae secundum famiem († etiam) audacia conturbatorum inualescebat, et in dies singulos duo mala ista [magis magisque] accendebantur. Frumentum autem palam omnino nullibi apparibat, quia celeriter ibant intrabantque domes et cellaria

Τοῖς γὰρ μὴν εὐπόροις καὶ τὸ μένειν πρὸς ἀπωλείαν ἴσου ἦν. Προφάσει γὰρ αὐτομολιᾶς ἀνηρεῖτό τις διὰ τὴν οὐσίαν. Τῷ λίμῳ δ' ἡ ἀπονοια πῶν στασιαστῶν συνήχμαζε, καὶ καθ' ἡμέραν ἀμψότερα προσεξεκαίετο τὰ δεινά. Φανερός μὲν γὰρ οὐδαμοῦ σῖτος ἦν. ἐπεισπηδῶντες δὲ διηρενῶν τὰς οἰκίας, ἐπειθ' εὐρόντες μὲν ὡς ἀρνησαμένους χκίζοντο, μὴ εὐρόντες δ' ὡς ἐπιμελέστερον κρύψαντος ἐβασάνιζόν. Τεχμηρίον δὲ τοῦ τ' εἶχειν καὶ μὴ τὰ σώματα πῶν ἀθλίων, ὧν οἱ μὲν ἔτι συνεσπῶτες εὐπορεῖν πρόφης ἐδόκουν,

(† et peruestigabant) et scrutabantur. Et siquidem apud aliquem aliquid inuenirent, († et) qui negabant. uerberabant plagis crudelitatis. Si uero nihil inuenirent († apud hominem), *quasi* propter famem [diligentia] celauissent, immanibus [itidem] tormentis cruciabant illos. At argumentum († demonestratum) *habendialiquid uel non habendi corpora* miserorum *erant*. Gum pui († cunque) ex illis erant corporibus († suis) [fortes], opinione niderentur quod cibus abundans esset illis. [Marcesentes autem corpore trucidati sunt], *et* occidere eos qui fame propinqui erant mortii [non erat discretio].

οἱ τηχόμενοι δὲ ἦδη παρωδεύοντο, καὶ κτείνειν ἄλογον ἐδόκει τοὺς ὅπ' ἐνδείας τεθνηξομέους αὐτίχα.

1787 թ. սպազրած Հայ բնագիրը լատիներէնի դարձնելով, անկիւնաւոր փակագծերի մէջ առայ,—այսպէս [. . . .], —Եւսերիտի Հայ թարգմանութեան մէջ յայտաւած նիւթը, և կըսր փակագծերի մէջ աւելացրի,—այսպէս (†) այն, ինչ որ աւելացրած է այդ թարգմանութեան մէջ: Ընդգծած բառերը տարբեր կերպով են առաջ բերած այդ թարգմանութեան մէջ, այսպէս որ *quasi* փոխարէն *qui*, և *habendi* *corporo* . . . *erant* փոխարէն *ունի* *si* *esset* *cuiusuis* *aliquid* *sive* *non* *esset* *species* *corporis* . . . *erat*, Ասորական բնագրին ճիշդ Համապատասխան: Այս երկու փոփոխութեան մէջ նկատում ենք Յովսէփոսի նախնադոյն թարգմանչի ազդեցութիւնը՝ յարմարեցրած Յունականին, մի թարգմանութիւն, որ կատարուած է Ասորականից, սրովհետև Յունարէնն ունի 705

τ' ἔχειν καὶ μῆ. Φοιτοῖσιν ἰσχυρῶς ὁμοῦ ἰσχυρῶς ἰσχυρῶς
 վերագրել չէ կարելի, որովհետեւ Ռուսիոյ լատինե-
 րէնը, որից մենք օգտուում ենք, աւելի պակաս առնչու-
 թիւն ունի լատիներէնի հետ, *habendi autem argumento*
erant corpora: Յամենայն դէպս նորան պէտք է վերա-
 գրել *magis magisque* բառերի յաւելումը, որովհետեւ
 Ռուսիոյ թարգմանում է այդ *amplius accendebantur*.
 Միւս կողմից *quasi... diligentia* ճիշդ թարգմանութիւն է
 ὡς ἐπιμελέστερον, և այդպիսով կարելի է վերագրել նախ-
 նագոյն թարգմանչին, որ Յունարէնն աչքի առաջ ունէր,
 քան Ստեփանոսին, թէև վերջինս այստեղ Ռուսիոյ թարգմանութեան մէջ *quasi diligentius* է գտնում: Սա-
 կայն և այնպէս վերջինս պէտք է վերագրել հաւանորէն
itidem բառի մտնումը, որ Յունարէն բնագրի մէջ իւր
 զուգակիւ բառը չունի: *Fortes* պէտք է պատկանէր Ասոր-
 ական Եւսեբիոսի սկզբնական հայ թարգմանութեանը,
 որ սակայն չկայ ձեռագրների մէջ: *Marcescents autem*
corpore trucidati sunt բառերը կորած են Ասորական Եւսե-
 բիոսի մէջ և այդպիսով պակաս նաև նորանից առնուած
 հայ թարգմանութեան մէջ: Դորա աւելացրած են եղել
 յունական բնագրից՝ Յովսէփոսի Ե-րգ դարու թարգման-
 չի կողմից, ինչպէս և *non erat discretio* բառերը, թէև
 այդ բառերն անգոհացուցիչ թարգմանութիւն են ἄλογον
 ἔδοκει, որ Ռուսիոյ թարգմանում է *nec rationis esse vi-*
debatur.

Այսպիսով Եւսեբիոսի մէջ մտած Յովսէփոսից առ-
 նուած այդ կտորների նկատմամբ, մենք կարող ենք 1787 թ.
 տպագրած հրատարակութեան մէջ երեք տարբեր թարգ-
 մանութեան խու երևան հանել.

1. — Ասորական մի ճշգրիտ թարգմանութիւն, որ
 պատկանում է Եւսեբիոսի թարգմանչին.

2. — Փոփոխութիւններ այս վերջինից և յաւելումներ՝
 յարմարեցրած յունականին, կատարուած Յունականից՝
 Յովսէփոսի նախնագոյն թարգմանչի ձեռքով.

3. — Յետագայ փոփոխութիւններ և յաւելումներ կա-

տարուած 1660 թ. Ստեփանոս Լեհացու ձեռքով, Ռուփինոսի լատին բնագրից։

Եւսեբիոսի մէջ ունեցած հատածները մեզ մի շատ գեղեցիկ քննաչափ (criterium) են տալիս, թէ մինչ որ աստիճան կրկին ձևափոխութեան է ենթարկուել նախնական հայ բնագիրը 1660-ին Ստեփանոսի ձեռքով լատիներէնի հիման վրայ։ Իւր աշխատանքի չափը փոփոխական է եղած, բարեբաղտաբար, և երբեմնակի միայն չափազանցութեան հասցրած։ Բայց և այնպէս, այդ էլ բաւական է եղել խանգարելու տպագրուած օրինակը, ինչպէս մի վկայ Յոյն բնագրի։ Որովհետև ուր էլ չբանանք գիրքը, մենք կը գտնենք, գուցէ, վեց տող՝ ակներև թարգմանած Յունականից Ե. կամ Զ. դարում. բայց եօթներորդ տողի մէջ նախադասութեան մի այլ ձև կամ՝ դարձուածք փոխ առած Ռուփինոսից։ Շատ յաճախ բառերը նոյն նախնական թարգմանութեան բառերն են, բայց խօսքի դարձուածքը կաղապարուած լատինականի հետևողութեամբ։

1787 թ. հրատարակիչներն հաւատում են, որ նոքա ձեռքի տակ ունէին Հայ թարգմանութեան այլ ձեռագիր, բայց Ստեփանոսի ինքնագիր օրինակն ունենալով, մի կողմ են թողել դոցա։ Այդ այլ օրինակներն, անշուշտ, նախնական թարգմանութեան անաղարտ բնագիրն ունէին և շատ ու շատ ցանկալի է, որ հայ բանասէրներն իրենց մատենադարանների մի նոր խուզարկութիւն ձեռնարկէին և աշխատէին գտնել իրենց Ե. դարի ազնուագոյն յիշատակարաններից մէկի անարատ օրինակը։ Յայտնի է, որ նախնական թարգմանութեան մի օրինակը կորած է 1832 թ. Կապի մօտ պատահած նաւաբեկութեան ժամանակ, հարիւրաւոր այլ յիշատակարանների հետ, որ Մատրասից Ս. Ղազար էին ուղարկուում։ Դոցա մէջ կար Իրեհիոսի վաղեմի թարգմանութեան մի ամբողջական բնագիր։

Fred. C. Conybeare.

Թարգ. Տիրայր վարդապետ